

ՀԱՅՐԵՆԻՔ – ՍՓՅՈՒՌՔ

ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ

Մայր հայրենիք մեկնելու տոնն ու ուրախությունն այս ամառ էլ ուղեկցեց ինձ. առիթը Համահայկական 8-րդ կրթական խորհրդածողովին մասնակցելն էր, որը մեկնարկեց օգոստոսի 2-ին Հայաստանի չքնաղ անկյուններից մեկում՝ Ադվերանում:

Խորհրդածողովն այդ օրերին (օգոստոսի 2-ից 6-ը) երկրում էր համախմբել 24 երկրների 120 ներկայացուցիչներին:

Հանրապետության հրապարակում էր ցայտադյուրի մտ, նրանց առաջին հանդիպումը: Հեռվից իրար ճանաչում էին, կամա, թե ակամա սփյուռքահայ ուսուցիչ դարձած գեղեցկատես աղջիկներն ու կանայք ողջունում ու ողջագուրվում հազար տարվա ծանոթների պես:

Համաժողովի մեկնարկը տրվեց Առնո Բարսեղյանի անվան համերգարահում: Նախ ընթերցվեց վարչապետ Նիկոլ Փաշինյանի ողջույնի ուղերձը, ապա բացման խոսքով հանդես եկան ՀՀ կրթության և գիտության նախարար Արայիկ Հարությունյանը, Արցախի կրթու-

թյան, գիտության և սպորտի նախարար Նարինե Աղբալյանը:

Ընդհանրապես համաժողովի մասնակիցներին նախարար Արայիկ Հարությունյանը նշեց, որ շատ են կարեվորում Հայաստան-Սփյուռք համագործակցությունը և հույս հայտնեց, որ այս քառօրյա աշխատանքի արդյունքում մշակված բանաձևը պետք է արտացոլի այն հիմնական ուղղությունները, որոնց իրագործմամբ հնարավոր կլինի լուծել Սփյուռքի կրթության ոլորտում առկա հիմնախնդիրները և ստեղծել կայուն համագործակցության միջավայր:

«Խնդիրները բազմազան են՝ սկսած դասավանդման մեթոդներից և նոր ծրագրերից մինչև արևմտահայերենի խնդիրը», - նշեց նախարարը:

Խորհրդածողովի երկրորդ օրը քննարկումներն ընթացան բաց ձևաչափով, ինչպես նաև լիազումար նիստերով: Լիազումար նիստերի ժամանակ ներկաները առիթ ունեցան կրկին հան-



դիպելու Կրթության և գիտության երիտասարդ նախարարին, որի բանիմացությունն ու համեստությունը, պարզությունն ու անմիջականությունը կաշառեց բոլորին:

Մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին ու քննարկեցին ՀՀ սփյուռքի նախարարի տեղակալ Դավիթ Մարգարյանի, Լեզվի կոմիտեի նախագահ Դավիթ Գյուրջինյանի զեկույցները:

Երրորդ օրը խմբերով քննարկում էին սփյուռքի ամենօրյա և մեկօրյա դպրոցներում արևելահայերենի և արևմտահայերենի դասավանդման հիմնախնդիրները այդ թվում ոչ ավանդական մեթոդների կիրառման հնարավորությունները:

Համաժողովի օրակարգում էր նաև կրթական կառույցների երկկողմանի համագործակցության հեռանկարները, նախադպրոցականների և մեծահասակների կրթության կազմակերպման առանձնահատկությունները, սփյուռքի դպրոցներում Շախմատ առարկայի ուսուցման հնարավորությունները:

Չորրորդ օրը խորհրդածողովն ամփոփեց աշխատանքների արդյունքները և ընդունեց համապատասխան բանաձև, որն առաջիկա երկու տարիներին ուղենիշ կլինի ՀՀ կրթության և գիտության նախարարության համար:

Բացի այն, որ համաժողովը շատ կարևոր ուղենիշ գծեց, մտքերի և փորձի փոխանակության հնարավորությունն տրվեց ներկաներին, այն նաև դարձավ շատ ջերմ հանդիպման վայր աշխարհի տասնյակ երկրներից ժամանած ավելի քան 120 մանկավարժների համար, որոնք բաժանվելիս հասցնեցին փոխանակեցին ամենաբազմաբևեռ աշխարհագրական տեղանուններով, արցունք ու ժպիտ նվիրեցին միմյանց կրկին հանդիպելու այլևս արդեն ազատ ու անկախ, սիրո ու համերաշխության, արդար ու շենշող մի երկրում, որի անունը Մայր Հայաստան է, իսկ իրենք նրա հպարտ ու արժանապատիվ քաղաքացիները:

Ստեփան ԿԱՐԱՊԵՏՅԱՆ



ԲԱՆԱԶԵՎ Համահայկական կրթական 8-րդ խորհրդածողովի



Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության կազմակերպած Համահայկական կրթական 8-րդ խորհրդածողովի համառոտ աշխատանքի ընթացքում հայեցի կրթության և դաստիարակության ոլորտում արձանագրվեցին հետևյալ իրողությունները.

1. արդի սփյուռքում նկատվում է հայ ինքնության գիտակցման և դրա զարգացման համար ուղենիշների պակաս,
2. սփյուռքի տարբեր երկրներում տեղի է ունենում հայկական ամենօրյա դպրոցների փակում,
3. կրթական որոշ հաստատություններ գործում են հայեցի կրթության կազմակերպման համար ոչ բարենպաստ քաղաքական-իրավական պայմաններում,
4. սփյուռքի տարբեր երկրներում բնակվող հայ երեխաների զգալի մասն ընդգրկված չէ հայեցի կրթության կառույցներում:

Ներկայացվեցին հետևյալ հիմնախնդիրները.

1. սփյուռքում թույլ է արտահայտված միասնական կրթական քաղաքականությունը. բացակայում են կրթական ընդհանուր չափորոշիչներ, որանցից բխող տարանջատված ծրագրեր, կրթության կազմակերպման վերաբերյալ ուղղորդումներ, ինչպես նաև սփյուռքում ստեղծված դասագրքերի և ուսումնական այլ կուրսերի գիտական գնահատականը,
2. արդի սփյուռքում գործող մանկավարժներին փոխարինող (հատկապես արևմտահայերենի) նոր սերնդի մանկավարժների խիստ կարիք կա,
3. սփյուռքի հայկական կրթական հաստատություններին տրամադրվող դասագրքերի և ուսումնառական այլ կուրսերի ցանկը մասամբ է համապատասխանում իրական կրթական կարիքներին,
4. վերջին տարիներին սփյուռքի հայկական կրթօջայիններում ավելացել է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների թիվը, ինչը պա-

հանջում է մանկավարժական լրացուցիչ հմտություններ:

Ելնելով վերոնշյալ իրողություններից և հիմնախնդիրներից անհրաժեշտ է.

1. մշակել հայ ինքնության ուղենիշ,
2. կրթական գործունեությունը սփյուռքում վերածել լուսավորչական լայնածավալ գործունեության,
3. սահմանել կրթական միասնական չափորոշիչներ բացառելով միասնական դասագրքերի գաղափարը,
4. ուսումնամեթոդական և դասագրքաստեղծ գործունեության հիմքում դնել միասնական չափորոշիչներ օգտագործելով նաև սփյուռքում առկա կրթական ներուժը,
5. ժամանակակից քաղաքական և հասարակական մարտահրավերներին դիմադրելու նպատակով կայացնել սփյուռքի երկրներում մրցունակ, արդիական կրթական հիմնական և լրացուցիչ կրթության հաստատություններ,
6. օգտագործել պրտաքին քաղաքականության միջոցները ի նպաստ հայեցի կրթության ցանցի ընդլայնման և բովանդակային զարգացման,
7. սփյուռքի կրթական գործունեությունը դիտարկել որպես ՀՀ կրթության, գիտության և տնտեսական զարգացման համար ռազմավարական ռեսուրս:

Վերոնշյալ տեսլականն իրագործելու նպատակով միջնաժամկետ հեռանկարում պահանջվում է.

1. ստեղծել արագ արձագանքման մասնագետների միջգիտակարգային խումբ, որը կգործողվի սփյուռք տեղային լուծումներ տալու նպատակով,
2. նպատակով Հայաստանում արդյունավետ գործող և արդիական ուսուցում իրականացնող հաստատությունների հետ համագործակցությանը, կիրառվող մեթոդիկայի և ծրագրերի ներդրմանը մասնավորապես ծրագրավորման և շահմանադրող ուղղությամբ,
3. սփյուռքում կազմակերպել հայոց պատմության և հայրենագիտության այլ թեմաներով դասախոսություններ,
4. կատարելագործել Հայաստանում մանկավարժների պատրաստման ծրագիրը նախատեսելով նաև մագիստրոսական խոսքով դասընթացներ, այդ թվում արևմտահայերենի ուղղությամբ:
5. վերապատրաստման ծրագրի հիմքում դրնել հայ ինքնության ուղենիշներ, կրթական միասնական չափորոշիչներ միաժամանակ այն դարձնելով առավել հասցեական, առանձին համայնքների կարիքների վրա հիմնված, որպես վերապատրաստման ձև կիրառել հետավար ուսուցումը և վերապատրաստումը տեղում գործողված մասնագետների միջոցով,
6. օգտագործել արտասահմանյան համալսարանների հենք տեղում ուսուցիչների պատրաստման և վերապատրաստման համար,
7. օգտագործել էլեկտրոնային բաց հարթակները հայերենի և հայրենագիտության ուսուցման, օլիմպիադաների անցկացման և այլ միջոցառումների համար,
8. ձեռնամուխ լինել սփյուռքում երիտասարդ մանկավարժներին աջակցելու և իրենց մասնագիտական գործունեության մեկնարկն ապահովելու համար հիմնադրամի ստեղծմանը,
9. հիմքեր ստեղծել սփյուռքում մանկավարժներին և աշակերտներին հայերենի իմացության աստիճանը որակավորելու համար տրամադրվող համապատասխան պետական փաստաթուղթ,
10. իրականացնել ծրագրաստեղծ և դասագրքաստեղծ գործունեություն հայերենի ուսուցման հարցում հատուկ շեշտադրում անելով բանավոր խոսքի զարգացմանը միտված դասագրքերի և լրացուցիչ ընթերցանությանը նպաստող գրքերի ստեղծմանը,
11. Հայաստանում երեխաների համար կազմակերպել ամառային մասնագիտական ուղղվածությամբ դպրոցներ լեզվի, արվեստի և այլ առանձին հայագիտության ճյուղերի խորացված ուսուցման նպատակով,
12. Վրաստանի հետ միջպետական պայմանավորվածությունների միջոցով նպաստել հայկական դպրոցներում հայերենի որպես մայրենի լեզվի ձանձվանը պահպանելով շարաթական 5 դասաժամ,
13. Վրաստանի և Աբխազիայի հայկական դպրոցների համար իրականացնել դասագրքերի

համապատասխանեցում գործող կրթական համակարգերին և ծրագրերին,

14. ՌԴ-ի հետ միջպետական պայմանավորվածությունների միջոցով նպաստել ՌԴ-ում հայաստանյան պաշտոնական կրթական փաստաթղթերի և դասագրքերի ձանձվանը, հայաշատ վայրերում հանրակրթական դպրոցների ուսումնական պլաններում հայերենի որպես ուսումնական առարկայի ներդրմանը, ինչպես նաև համալսարաններում հայագիտական ամբիոնների և կենտրոնների հիմնադրմանը,

15. ձեռնամուխ լինել սփյուռքում մեկօրյա դպրոցների աջակցության հիմնադրամի ստեղծմանը:

Ելնելով տեղի ունեցած քննարկումներից և ներկայացված առաջարկություններից, վերոնշյալ դրույթներն իրագործելու նպատակով, խորհրդածողովի մասնակիցները պատրաստակամություն են հայտնում մինչև հոկտեմբերի 30-ը ՀՀ կրթության և գիտության նախարարություն ներկայացնել.

- ա/ տեղեկություններ տվյալ կրթական հաստատությունում օգտագործվող դասագրքերի վերաբերյալ,
- բ/ ուսուցման հիմքում ընկած առարկայական և համալիր ծրագրեր,
- գ/ հիմնական խնդիրները և դրանց լուծման վերաբերյալ առաջարկությունները:

2018թ., օգոստոսի 2-6-ը, Ադվերան